ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

06.10.2025թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Ա. Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Ա.Շահվերդյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**

/զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/

2. **Այլ հարցեր**:

Ե լ ո ւ յ թ ու ն ե ց ա ն՝

ՀՀ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանը ներկայացրեց մարզպետի աշխատակազմի պատասխանատուներին և ստորաբաժանումների ղեկավարներին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկեց յուրաքանչյուր երկուշաբթի ժամը 9.30-ին անցկացնել գործակարգավարական խորհրդակցություն, որի ընթացքում կքննարկվեն տրված հանձնարարականների կատարման ընթացքի, ինչպես նաև ստորաբաժանումների կողմից ներկայացվող առաջարկությունների վերաբերյալ հարցեր: Վերոգրյալ պահանջը կատարելու նպատակով մարզպետը հանձնարարեց տրված հանձնարարականների կատարման համար սահմանված հստակ և իրատեսական ժամկետները պահպանել և դրանց կատարման վերաբերյալ սահմանված կարգով ներկայացնել տեղեկատվություն:

Տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություններ և առաջարկություններ ներկայացրեցին մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյանը, խորհրդականներ Հ.Ադամյանը, Լ.Աբրահամյանը, ստորաբաժանումների ղեկավարներ Ռ.Մարգարյանը, Ա.Շահվերդյանը, Է.Հախվերդյանը, Մ.Խեչումյանը, Ռ.Պողոսյանը:

Մարզպետը հանձնարարեց.

1. **Մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյանին՝**

1) Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ Վանաձոր համայնքին ձմեռային տեխնիկայով ապասարկման, ճանապարհաշինական և ճանապարհների սպասարկման պատասխանատու կազմակերպությունների հետ համագործակցության վերաբերյալ:

2) Սույն թվականի հոկտեմբերի 18-ին նախատեսված «Բերքի տոնի» միջոցառման պատշաճ կազմակերպման և անցկացման նպատակով համագործակցել կազմակերպիչ

ընկերության և համայնքների ղեկավարների հետ և յոթօրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

2. Մարզպետի խորհրդական Հ.Ադամյանին՝

Ներկայացնել առաջարկություններ «Ուսուցչի օրվա» միջոցառման պատշաճ կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

3. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Մ.Դալլաքյանին՝

5-օրյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Լոռու մարզի համայնքների բյուջեների կատարողականի և սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների վերաբերյալ:

4. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

1) անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզում իրականացվող շինարարական աշխատանքների ժամկետների և որակի պահպանման նկատմամբ, դրանց խախտումների և ուշացումների ցանկացած դեպքերի առթիվ՝ ձեռնարկել համապատասխան օրենսդրական կարգավորումներով սահմանված միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում դիմել վերադաս կամ պատվիրատու նախարարություններին և գերատեսչություններին.

2) քննարկել և 10–օրյա ժամկետում ներկայացնել ամբողջական և հիմնավոր տեղեկատվություն և առաջարկություններ Վանաձոր համայնքի տնակային ավանում բնակվող բնակիչների վերաբերյալ, այդ գործընթացում ընդգրկելով մարզպետարանի և համայնքապետարանի համապատասխան մասնագետներ:

5. Մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերով վարչության պետ Մ.Խեչումյանին՝

Շրջաբերական գրությամբ հանձնարարել Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համայնքների տարածքներից հին ավտոմեքենաների կմախքները և մետաղի ջարդոնները համապատասխան վայրեր տեղափոխելու, ինչպես նաև համայնքների մուտքերի, ելքերի և ճանապարհամերձ հատվածների մաքրման աշխատանքներ կատարելու ուղղությամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99